ԵՎԱՐԻՉ ՍՏԵՓԱՆ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԴԻՄՈՒՄԸ

Հայկական ՍՍՀ Մատենադարանի կաթուղիկոսական դիվանի արխիվային ֆոնդում գտանք տաղանդավոր նկարիչ՝ Ստեփան Ներսեսյանի (1820—1884)[1] երկու դիմումը, որոնցից մեկը 1833 թ. մարտի 13-ին, Թիֆլիսից, Վրաստանի հայոց հոգևոր կառավարության անդամ Ստեփանոս արքեպիսկոպոս Արղությանին ուղղած Ս. Ներսեսյանի խնդիրն է, իսկ մյուսը Հևորգ 4-րդ կաթուղիկոսին հասցեագրած դիմումն է։ Խնդրի մեջ Ս. Ներսեսյանը նշելով իր թշվառ մանկությունը, ներկա ծանր վիճակը և ուսման ծարավը, թախանձագին խնդրում է Արղությանից, որ նա միջնորդի Հովհաննես կաթուղիկոսի առաջ, որպեսզի նա, իրեն ընդունել տա Մոսկվայի Լազարյան ճեմարան սովորելու (ճեմարանն հիմնադրվել է 1815 թ.)։ Ինչպես պարզվում է, նրա խնդիրը ապարդյուն է անցնում։

Թիֆլիսում նա ծառայության է անցնում իտալացի մի նկարչի մոտ և նրա հետ գնում Պետերբուրգ, նպատակ ունենալով նկարչական դպրոց ընդունվելու։ Այնտեղ նա պատահում է իր հայրենակից Խաչատուր Աբովյանին (Ստեփան Ներսեսյանը ծնվել է Երևանում), որը ծանոթանալով երիտասարդի նկարչական ընդունակությունների և սովորելու ջերմ ցանկության հետ, գերմաներեն լեզվով նամակներ է գրում իր ծանոթ ռուս նշանավոր գրող Վ. Ա. Ժուկովսկուն (1783—1852) և անվանի գիտնական, Դորպատի համալսարանի դասախոս Ֆրիդրիխ Պարրոտի (1767—1852) հոր՝ պետական խորհրդական Գ. Ֆ. Պարրոտին և նրանց խնդրում, որպեսզի նրանք միջամտեն ու ընդունել տան Ս. Ներսեսյանին Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիան։ Այդ մասին Վ. Ժուկովսկուն ուղղած նամակում Խ. Աբովյանը խոսելով իր հայրենակիցներին եվրոպական կրթություն և լուսավորություն հաղորդելու իր բուռն ցանկության մասին, նա գտնում է, որ այդ իրականացնելու համար, ավելի շուտ, բանաստեղծության, նկարչության և երաժշտության միջոցով եվրոպական լուսավորություն և կրթություն կարելի է տարածել՝ երևակայությամբ շատ հարուստ արևվելցու մեջ։ Խ. Աբովյանը անդրադառնալով Ս. Ներսեսյանի սովորելու հարցին գրում է.

«...Մի քանի օր առաջ այստեղ է եկել իմ հայրենի Երևան քաղաքից մի երիտասարդ՝ Ստ. Ներսիկով անունով, որին ես ճանաչում եմ և որի մասին գիտեմ, որ նա ոչ միայն բուռն ձգտում, այլև խոշոր ձիրք ունի դիմանկարչության համար և որը միևնույն ժամանակ ոչ թե որևէ վարպետի օգնությամբ, այլ սոսկ ինքնակրթությամբ այնքան է առաջադիմել, որ ի վիճակի է բավական հաճելի գաղափարներ իրագործելու... Նա իր բախտին արժանացած կլինի, եթե միայն կարողանա մտնել Գեղարվեստների ակադեմիա, և այն բարիքը, որ կստացվի

---

1 Կարծիքներ կան, որ նա ծնվել է 1807 թվականին։

2 Նկարիչ-արվեստագետ Ռաֆայել Շիշմանյանը (1885—1959) 1958 թ. Երևանում հրատարակած իր «Հնանկարն ու հայ նկարչությունը» վերնագրով գրքի Ս. Ներսեսյանին նվիրած մասում, հիշյալ վավերագիրը օգտագործել է, առանց վավերագրից մեջբերումներ անելու։

Ձեր միջնորդության շնորհիվ, կծառայի հազարավոր մարդկանց օգտին... Որքա՜ն բախտավոր կլինեմ, եթե այդ երիտասարդ մարդուն, առանց իր գիտնալու, առանց իր խնդրելու այդ ուրախ լուրը տանեմ և նրանից անդրժելի երդում առնեմ՝ հայրենիքին ծառայելու, նրա անունը փառավորելու, նրա դավակների համար իր ամբողջ ուժն ու կարողությունը գործ դնելու և ամբողջ կյանքում շնորհակալ լինելու այն մարդուն, որ նրա բախտի պատճառն է եղել»[3]։

Ինչպես ասացինք, Խ. Աբովյանը նամակով դիմել էր նաև պետական խորհրդական Ֆ. Պարրոտին, ուր գրում է. «...Կիրակի օրը պատահմամբ լսում եմ, որ այստեղ է ժամանել իմ հայրենի Երևան քաղաքից մի երիտասարդ մարդ Ստ. Ներսիսյան անունով։ Նկարչության նկատմամբ ունեցած բուռն սիրուց տարված, թողնում է նա իր հայրենիքը, ազգականներին, մի իտալացի նկարիչի մոտ ծառա է մտնում և այդ անվան տակ՝ ամենադաժան չարչարանքներ կրելով իր տիրոջից, հասնում է Պետերբուրգ... Այժմ նա ցանկանում է կամ այստեղ մեռնել, կամ վերադառնալ իբրև արվեստագետ՝ իր ազգի համար... Ո՞վ գիտե, թե ինչ տաղանդ է թաքնված նրա մեջ... Այդ ակնկալությամբ Ձեզ եմ հղում այս գրությունը, Ձեզ, որի հանդեպ տածում եմ որդիական սեր... Բարի եղեք որոշել իմ ճակատագիրը, որպես այդ երիտասարդ մարդու ճակատագիր»[4]։ Չնայած այս բոլորին, Ս. Ներսեսյանին Գեղարվեստների ակադեմիա ընդունվելու գործը չի հաջողվում՝ տեղ չլինելու պատճառով։

Սովորելով և ստեղծագործելով խանդավառված երիտասարդ նկարիչը չի ընկճվում։ Նա սկսում է համառ կերպով պարապել և ստեղծագործել։ Նկարում է «Կրակող Ասիացին» վերնագրով և այլ նկարներ։ Ռուսական «Նկարիչներին խրախուսող ընկերությունը» օգնության նպատակով, Ս. Ներսեսյանից 100 ռուբլի դումարով գնում է այդ նկարը։

Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայի փոխնախագահ Ֆ. Տոլստոյը և ուրիշները տեսնելով Ս. Ներսեսյանի ստեղծագործությունները, 1838 թ. նրան ընդունում են հիշյալ ակադեմիայում սովորելու, որն ավարտում է 1842 թ. և մնում է Պետերբուրգում աշխատելու։ Ս. Ներսեսյանը Պետերբուրգում եղած ժամանակ ծանոթանում է հռչակավոր նկարիչ Հովհաննես Այվազովսկու (1817—1900) հետ, որը Ս. Ներսեսյանին, հարկ եղած դեպքում օգնում և օժանդակում է ամեն միջոցներով։

Մի քանի տարի Պետերբուրգում աշխատելուց հետո, Ս. Ներսեսյանը գնում է Թիֆլիս, ուր հանդիպում է իր վաղեմի բարեկամ Խաչատուր Աբովյանին, որը ցանկանում է Ս. Ներսեսյանին աշխատանքի տեղավորել, բայց չի հաջողվում։ Ս. Ներսեսյանին հաջողվում է նկարչության դասեր վերցնել Անդրկովկասի աղջկանց ինստիտուտում։ Միառժամանակ այդտեղ աշխատելուց հետո, Ս. Ներսեսյանը մեկնում է Ղարաբաղ և աշխատանքի անցնում Շուշվա թեմական դպրոցում, որպես նկարչության դասատու։ Ապա վերադառնում է Թիֆլիս և աշխատանքի անցնում հայկական դպրոցներում, մինչև իր կյանքի վերջը։

Մանկավարժական ծանր աշխատանքի հետ միասին, Ս. Ներսեսյանը զբաղվում է ստեղծագործական աշխատանքով և տալիս է մի քանի նկարներ։

---

3 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, տասներորդ հատոր, Երևան, 1961, էջ 167—168։

4 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, տասներորդ հատոր, Երևան, 1961, էջ 171—172։

Այդ տարիներին է, որ նա նկարում է «Խնջույք Քուռի ափին» նշանավոր նկարը և այլ նկարներ։ Ս. Ներսեսյանը և Հակոբ Հովնաթանյանը (1809—1884) թարմ, բովանդակալից և ռեալիստական ոճով արտադրած նկարներով, հիմք են դնում 19-րդ դարի հայկական դիմանկարչության ռեալիստական ժանրին։

Ուշագրավ է Ս. Ներսեսյանի 1878 թ. մարտի 27-ին, Թիֆլիսից Գևորգ չորրորդ կաթողիկոսին ուղղած դիմումը, որը գրել է, Ներսես Աշտարակեցու (1770—1857) երկու նկարը էջմիածնի վանքին նվեր տալու կապակցությամբ։ Ս. Ներսեսյանը դիմումում կանգ է առնում Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ, 1824 թ. Թիֆլիսում կառուցած Ներսեսյան դպրոցի կողմից հայ իրականության մեջ նրա խաղացած ազգային և կուլտուրական դերի վրա։ Ապա նա դիմումի վերջում հայտնում է, որ նկատի ունենալով Ներսես Աշտարակեցու հայ ժողովրդին մատուցած հիշյալ և այլ ծառայությունները, նկարել է նրա յուղաներկ մեծ և փոքր նկարները և դրանք նվիրում էջմիածնի վանքին։

Այդ նկարները մի ժամանակ պահել են էջմիածնի մատենադարանում։ Էջմիածնի մատենադարանը 1940 թ. Երևան տեղափոխելու կապակցությամբ, ձեռագրերի, արխիվային վավերագրերի և մի շարք նկարների հետ Երևան են տեղափոխում նաև այդ նկարները և դրանք պահում Մատենադարանի արխիվային բաժնում, որոնք ուրիշ նկարների հետ միասին, 1954 թ. հանձնում են Հայաստանի պետական պատկերասրահին։

Հրատարակելով հիշյալ դիմումները, կարծում ենք, որ դրանք օգտակար կարող են լինել Ս. Ներսեսյանի կյանքի և գործունեության որոշ էջեր լուսաբանելու համար։

ԱՎԵՏԻՔ ԱԴԱՄՅԱՆ

Բազմերախտ և մեծախնամ Տեառն իմոյ Ստեփաննոսի սրբազան Արք. եպիսկոպոսի Արղութեանց անդամոց հոգևոր կառավարութեան Հայոց Վրաստանի

ԽՆԴԻՐ

Ըստորագրեալ ծառայէս։

Ամենայն անցք կենաց իմոց յորէ մանկութեան իմոյ և այսր յայտնի գոլով ծերութեան ձերում որպես և այժմեան վիճակ իմ, վասն որոյ և ավելորդ համարիմ յերկարել բանս զնոցանէ, զի ձեռնասուն ձեր գոլոր զհանգամանս իմ դուք առաւել գիտեք քան զայլս. և զի երախտիք և անհուն խնամարկութիւնք ձեր մեծ են եղեալ ի վերա իմ մինչև ցայսոր, վասն որոյ և ձեզ համարձակիմ յայտնել զկարիս և զցանկութիւնս իմ և յուսամ ընդունել զոր խնդրեմ իբրև ի բարերար հօրէ։

Ժամանակ աւուրց իմոց անցանե իզուր և ես չգիտեմ թե զապագայ կեանս իմ զիարդ ունիմ վարել. սմին երի ցանկանալով ցանկանամ լինել ի Մոսկով ընդ հովանաւ ճեմարանի ազգախնամ Տեարց Եղիազարեանց, խնդրեմ պաղատանօք մեծաւ ի սրբազանութենէ ձերմէ միջնորդ լինել առ վեհափառ սրբազան կաթողիկոսն Յովհաննէս, թերևս ողորմյալ բազմամյա որբության իմոյ առաբեսցե զիս ի Մոսկով գրելով առ Եղիապարյանսն թուղթ յորդորանաց ի յորդեղրել և զիս թիւս բազմաթիւ որդւոց իւրեանց։ Ես զայս բարերարութիւն ձեր ոչ մոռացայց և թե Տէր մի արասցէ ես ապերախտեցայց այսու ամենայնիվ Աստ-

ված և Տեր երկնից ոչ մոռասցի զոր առնեքդ զի բարերարութիւնք և երախտիք ոչ ջնջեսցին երբեք ի մատենե ժամանակաց։

Աղէ արարեք, սփռեցեք դանձի և ողորմութեան ձերոյ ի վերայ իմ և հոգով և մարմնով կացուցեք ձեզ երախտապարտ, և ես կամ մնամ բազում հուսով և սպասելով բաւականութեան իրիք։

Ամենախնամ տերութեան ձերոյ ամենախոնարհ ծառայ ձեր Ստեփաննոս Ներսեսեանց։

ի 13 մարտի 1833 ամի
Ի Տփխիս

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 79, վավ. 222

ԳԵՐԱԶՆՏԻՐ ՎԵՀԻԴ ԳԵՈՐԳԱՅ ՁՈՐԲՈՐԴԻ

Նվեր.

Գործ մատանց նվաստ նկարչիս՝ Ստեփաննոսի Ներսիսեանց.

Զէ անծանոթ Ձերումդ Վեհի՝ ազգաշեն գործերն անմահ Ներսիսի, յորոց նշանավորներից մինն և գլխավորն է՝ Տփխիսու Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցն, ուր եղել է և իմ նվաստ նկարչիս՝ ուսում և կրթութիւնն. և ոչ այսչափ միայն, այլ և փրկութիւնն կորուստից՝ ամբողջ Վրաստանումն՝ Հայկական բարբառոյ, վասնզի, մինչ այս դպրոցի կառուցանելն, հայ ժողովրդյան բերնից արտաքսված լինելու պատճառով՝ անգամ Հայ տաճարների մեջ քարոզը կարդացվում էր վրաց բարբառովն, և այսօր եթե աշխարհականը և հոգևորականը գտել և վերադարձրել են իրենց կորցրած սեփական բարբառն՝ պարտական են այդ դպրոցի գոյությանն, և որովհետև իմ կյանքիս բախտն արժանացրել ս և ինձ տեսանել այս դպրոցի հիսուն տարվա գոյությունն, և որի համար եղև Ազգի կողմից ջերմ ձգտումներ հոբելեանը կատարելու, բայց վրայոքն անցնելով ամբողջ երկու տարի, և դատարելով ձգտումներն մինչ այժմս անհայտ պատճառավ, ես, նվաստ նկարիչս իմ խորին ձգտմամբ և երախտապարտ հոգվով արկի զայս գործ իմս մատանց յԱզգս, որ յուրաքանչյուր ոք ունելով առաջի աչաց՝ անջինջ պահիսցէ անմահ հիշատակն երջանկին.

Արդ, վեհափառ Տէր, դուք, որ կալնում եք նորա գահն Ձերդ վեհ հոգվով և Ազգաշեն գործերովդ, ուրեմն և ես բախտ ունիմ իմս որդիական պարտավորությամբ առաջի առնել Ձերդ վեհափառ օծության գործ իմոց մատանց զայս զուպգ պատկերս անմահ Ներսիսի, ունելով անդրդվելի հույս և հաստատուն հավատ սիրով և քաղցրությամբ ընդունելությունդ՝ մնամ ակնկալու Վեհիդ օրհնության։

ի 27 մարտի 1878 ամի
Տփխիս

Նվաստ նկարիչ Ստեփաննոս
Ներսեսեանց

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 231, վավ. № 109։